«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեության ամփոփ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հունվար-հունիս, 2006թ.)

Երևան
2006թ.

Բովանդակություն

Հասարակագիտական հետազոտությունների ծրագիր …….....…… 3

Քաղաքական վերլուծությունների ծրագիր 6

Տեղեկատվական ծրագիր 9

Գործունեության ապահովման ծրագիր 11

Հավելված 1. Հասարակագիտական հետազոտությունների ծրագրի շրջանակներում հրատարակված նյութերը, սեմինար-գիտաժողովներին և հեռուստահաղորդումներին մասնակցությունը 12

Հավելված 2. Քաղաքական հետազոտությունների ծրագրի շրջանակներում հրատարակված նյութերը, սեմինար-գիտաժողովներին և հեռուստահաղորդումներին մասնակցությունը 14

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի ղեկավար՝ Գագիկ Հարությունյան, փորձագետներ՝ Թամարա Վարդանյան, Նելսոն Շահնազարյան, Արտեմ Սարգսյան, Վահրամ Հովյան, Ռուբեն Սաֆրաստյան, Հրանուշ Խառատյան:

Ծրագրի շրջանակներում հրատարակվել է 32 հոդված, նյութերը զեկուցվել են 7 սեմինարներում և 1 գիտաժողովում, իրագործվել է 3 նպատակային հեռուստահաղորդում (տես կցված հավելված 1):

1. «Տեղեկատվական և հոգևոր անվտանգության (կիբառական հայագիտության) խնդիրների ուսումնասիրություն» թեմա

1.1 «Արժանապատիվ մարդու հայեցակարգը»

Արժանապատիվ մարդու կերպարը և կարգավիճակը հանրությունում հասարակական կարևոր նշանակություն ունի և ազգաձևավորման կարևոր բաղադրիչներից է: Այդ խնդիրն ուսումնասիրվել է՝ ելնելով հայ զինվորականի, վաճառականի և արհեստավորի վերաբերյալ պատմական անցյալում եղած պատկերացումներից: Նշվում է, որ էպիկական հերոսները, փաստորեն, «արժանապատիվ մարդկանց» ընդհանրական կերպարներ են: Հայի կերպարը համեմատվել է այլ մշակույթների (անգլիական, ամերիկյան, իսպանական, չինական, ճապոնական, արաբական) համապատասխան կերպարների հետ: Կատարված աշխատանքը հետապնդում է կիբառական նպատակ. ուրվագծելով արժանապատիվ հայի կերպարը՝ այն դարձնել ժամանակակից կյանքի կողմնորոշիչներից մեկը: Հետազոտություններն այս ոլորտում զետեղվել են «Նորավանք»-ի հատուկ թողարկված «Տեղեկագրում» (#2/18):

1.2 «Մեր հաղթանակները»

Աշխատանքի նպատակն է կիբառական հայագիտության և հոգեբանական անվտանգության համատեքստերում ներկայացնել հայ ժողովրդի ռազմարվեստի պատմությունը և տարած հաղթանակները:

Ենթադրվող ժողովածուի համար հայթայթվել են նախօրոք ընտրված 70 հոդվածների պատմագիտական նյութերը, ձևավորվել է պատմագիտական բազա, որի հիման վրա պատրաստվել և խմբագրվել են հոդվածները: Նյութերը ենթարկվել են ժամանակագրական պարբերացման. առանձնացվել է 7 ժամանակաշրջան, որոնցից յուրաքանչյուրի համար գրվել է մեկական ներածական հոդված՝ նվիրված տվյալ շրջանի ընդհանուր քաղաքական իրավիճակին ու հայոց ռազմական կառույցին: Հոդվածներին կից կազմվել է մատենագիտություն: Կատարված աշխատանքի հիման վրա առաջարկվել է ենթադրվող ժողովածուի մակետը: Այն կարիք ունի վերամշակման և վերախմբագրման:

1.3 «Հայության քաղաքակրթական կողմնորոշումները»

Արդի ժամանակաշրջանում քաղաքակրթություն հասկացությունը վերածվել է ռազմաքաղաքական գործոնի, և «միջքաղաքակրթական բախումների» դոկտրինը գլոբալ հակաահաբեկչական պատերազմի գաղափարախոսական հենքն է: Համաձայն Հիմնադրամի կողմից մշակված դրույթների, քաղաքակրթական գործոնի անտեսումը կարող է լրջորեն խաթարել ՀՀ տեղեկատվական անվտանգությունը:

Քաղաքակրթական կողմնորոշումների ուսումնասիրության նպատակով կատարվել են հարցումներ Հայաստանի քաղաքական ընտրանու շրջանակներում, մշակվել են այլ կազմակերպությունների կողմից իրագործված սոցիոլոգիական տվյալները: Ելնելով այդ նյութերից և, առաջին հերթին, պատմամշակութային իրողություններից՝ առաջարկվել է

հայկական ուրույն քաղաքակրթության թեզը։ Այդ թեզի շուրջ հրատարակվել են հոդվածներ, կատարվել են քննարկումներ, որոնց արդյունքները ներկայացվել են լայն հանրությանը հեռուստահաղորդումների տեսքով։

1.4 Ցեղասպանության և Սփյուռքի հիմնախնդիրների ուսումնասիրություն

1.4.1 Վիրահայության հիմնախնդիրները

Հայ համայնքների հիմնախնդիրների ուսումնասիրության համատեքստում իրագործվել է Թբիլիսիի հայկական համայնքի դաշտային ուսումնասիրություն։ Մասնավորապես, ուշադրություն է դարձվել թիֆլիսահայության համար հրատապ հետևյալ խնդիրների վրա.

• Գործում են ընդամենը 8 հայկական (կամ հայկական սեկտոր ունեցող) դպրոցներ, որոնք գտնվում են փակման եզրին։ Գործող միակ հայկական ամբիոնը (Իլյա Ճավճավաձեի անվ. համալսարանում) վերջերս միացվեց ռուսական և աղրբեջանական սեկտորներին ու այլևս որպես այդպիսին գոյություն չունի։ 2005-ին ամբիոնն ունեցել է ընդամենը 6 ուսանող։

• Հայությունը Վրաստանի տեղեկատվական դաշտում գործնականում ներկայացված չէ։ Չկան հայալեզու թերթեր, գործում է միայն պաշտոնական «Վրաստան» թերթը, որը համայնքի կողմից ընկալվում է որպես վրացական իշխանությունների խոսափող։ Միակ հայալեզու ամսագիրը մանկական «Արևիկ» հանդեսն է, որը ֆինանսական խնդիրներ ունի և բազմիցս կանգնել է փակման վտանգի առջև։ Շաբաթական մեկ անգամ հեռարձակվում է հայալեզու 20 րոպեանոց հեռուստահաղորդում, ռադիոհաղորդումները օրական 5 րոպե են տևում. դրանք գործում են Եվրախորհրդի պահանջով։ Գործում է ընդամենը մեկ հայկական ռուսալեզու կայք։

Ըստ փորձագիտական մոտեցումների, վերոհիշյալ խնդիրների արմատական լուծումներն ընկած են հայրենադարձության ծրագրի հարթությունում։ Մարտավարական տեսակետից նպատակահարմար է ավելի արդյունավետ օգտագործել հայկական ՀԿ-ների գործոնը և եվրոպական ստանդարտների կիրառումն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում։ ՀՀ դերակատարումը ներկա փուլում, թերևս, պետք է արտահայտվի խնդրի մանրակրկիտ ուսումնասիրությունների կազմակերպումով և հատկապես տեղեկատվական մեթոդների (թերթ, ամսագիր, ռադիո-հեռուստահաղորդումներ, ինտերնետային կայքեր) ավելի լայն կիրառմամբ։ Նկատենք, որ գրագետ մտածված կայքի ստեղծումը կապված է համեմատաբար ոչ մեծ ծախսերի հետ և նման ծրագրի իրագործումը (որը համապատասխան միջոցներ ունենալու պարագայում կարող է կատարել նաև «Նորավանք»-ը) կարող է լուրջ արձագանք գտնել երիտասարդ թիֆլիսահայերի միջավայրում։

1.4.2 Հայրենադարձության հիմնախնդիրները

«Երկիր» հայրենակցական միության հետ համատեղ Հիմնադրամը մասնակցել է «Հայրենադարձության ազգային ծարգրի» մշակմանը։ Իրագործվել է նաև հետազոտություն «Հայրենադարձություն. իրավական ապահովման և արդյունավետ իրականացման հարցերը» (Միքայել Աղաջանյան) թեմայով։

1.4.3 Ցեղասպանության քաղաքական և իրավական խնդիրները

Այս ոլորտում իրագործվել են հետևյալ աշխատանքները.

• Ցեղասպանության քաղաքական համատեքստը միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով ՀՀ ԱԳՆ-ի հետ համատեղ (նախարարի տեղակալ՝ Արման Կիրակոսյան) հրատարակվել է «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը» եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) աշխատությունը։

• Ցեղասպանության իրավական հիմնախնդիրները լուսաբանելու նպատակով Վլադիմիր Մարգարյանին պատվիրվել է «Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները» աշխատությունը, որը հրատարակվել է Հիմնադրամի տեղեկագրում:

1.4.4 «1988-1990թթ. Ադրբեջանում հայկական ջարդերի ականատեսների վկայությունների հավաքման ծրագիր» թեմա («Նորավանք» ԳԿՀ-ի աջակցությամբ իրագործում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը)

Կազմվել է հետազոտության մեջ ընդգրկվելիք մարզերի և հարցվողների ընտրության և դաշտային նյութերի հավաքման հարցարան, սկսվել է դաշտային նյութահավաքչությունը: Մայիս-հունիս ամիսների ընթացքում հետազոտողները նյութեր են հավաքել Երևան քաղաքում, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում՝ Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի, Խանլարի, Շամախու, Շաքիի, Դաշքեսանի փախստականներից:

Ընդհանուր առմամբ, ներկա պահին գրանցված է քառասունից ավելի հարցազրույց, որոնցից համակարգչավորված և տեքստի են վերածված քսանհինգը: Աշխատանքները կշարունակվեն Շիրակի, Տավուշի և Լոռվա մարզերում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի ղեկավար՝ Սարգիս Հարությունյան, փորձագետներ՝ Գագիկ Հարությունյան, Սևակ Սարուխանյան, Վահագն Ազլյան, Կարեն Վերանյան, Ռուբեն Սաֆրաստյան, Վարդան Վարդանյան

Ծրագրի շրջանակներում հրատարակվել է 47 հոդված, նյութերը զեկուցվել են 3 սեմինարներում, 1 գիտաժողովում, 1 միջազգային ինտերնետ ֆորումում, իրագործվել է 1 նպատակային հեռուստահաղորդում, տրվել են տասնյակից ավելի հարցազրույցներ ԶԼՄ-ում (տես հավելված 2):

2006թ. առաջին կիսամյակի ընթացքում «Քաղաքական հետազոտությունների» ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանին հարևան երկրների՝ Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա և արդի ուժի կենտրոններին՝ ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն, առնչվող գերազանցապես քաղաքական, ռազմական և տնտեսական զարգացումների մոնիթորինգ և վերլուծություն:

Հայաստանի հանրապետություն

Անցած ժամանակահատվածը բնորոշվեց Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ գրանցված մի շարք զգալի տեղաշարժերով:

Հայ-ամերիկյան հարաբերությունները ձեռք բերեցին որոշակի սառնություն, որոնց հիմնական պատճառը Արցախյան հիմնահարցում Վաշինգտոնի նախաձեռնություններն էին: Որպես տեղի ունեցավ Հայաստանում Ռուսաստանի ազդեցության էական աճ, ինչը հիմնականում դրսևորվեց էներգետիկ և ռազմաքաղաքական ոլորտներում ձեռք բերված նոր պայմանավորվածություններով:

2006թ. առաջին կիսամյակում զգալիորեն ակտիվացավ իրանական միջուկային ծրագրի շուրջ լարվածությունը, ինչը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգությանը մի քանի կետերով. միջուկային պատերազմի վտանգ հարևան երկրում, տարածաշրջանային ընդհանուր ապակայունացում, իրանահայ համայնքի հետ կապված խնդիրներ, Իրանի ադրբեջանցիների գործոն, կոմունիկացիաների խաթարում և տնտեսական վնաս:

Արցախյան հիմնահարց

2006թ. առաջին կիսամյակը բնորոշվեց Արցախյան հիմնահարցի շուրջ ընթացող զարգացումների դիվանագիտական ակտիվացմամբ: Դրա հիմնական պատճառը Հարավային Կովկաս-Կասպից ավազան-Կենտրոնական Ասիա գծի երկայնքով ամերիկյան քաղաքականության կողմից համեմատաբար նոր՝ ռազմավարական բնույթի խնդիրների առաջքաշումն է: Նշված գծում ամերիկյան ազդեցությամբ ստեղծվելիք ռազմաքաղաքական ու տնտեսական համակարգերը պետք է իրենց դերն ունենան Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի ուղղությամբ գործող ԱՄՆ ռազմավարական հաշվարկներում: Մյուս կողմից՝ հատկապես Հարավային Կովկասի մասով Մոսկվան ու Թեհրանը ձգտում են ամեն կերպ պահպանել *status quo*-ն:

Նշված ժամանակահատվածում Արցախյան հիմնահարցում տեղեկատվական հարթությունում հանդես եկան երկու առանցքային տարրեր՝ հանրաքվեի անցկացումը և խաղաղապահների հավանական տեղակայումը: Վերջինը հանդիսանում է տարածաշրջանում սեփական ռազմական ներկայությունը զգալիորեն ավելացնելու ԱՄՆ քաղաքականության մաս:

Ընդհանուր առմամբ, Արցախյան հիմնահարցը հայտնվել է ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհաքաղաքական աննախադեպ ձևափոխումների համատեքստում: Հաշվի առնելով

վերոհիշյալ հանգամանքը՝ պետք է ենթադրել, որ 2006թ. երկրորդ կիսամյակում նույնպես կպահպանվի հիմնահարցի շուրջ առկա դիվանագիտական ակտիվացումը։

Ադրբեջան

2006թ. առաջին վեց ամիսներին գրանցվեց Ադրբեջանի աշխարհաքաղաքական նշանակության վերաբերյալ պատկերացումների աճ տարածաշրջանում գործող ուժի բոլոր կենտրոնների (Ռուսաստան, ԱՄՆ, Եվրամիություն), ինչպես նաև տարածաշրջանային տերությունների (Իրան, Թուրքիա) կողմից։ Այդ հանգամանքն առաջին հերթին պայմանավորված է գերազանցապես Վաշինգտոնի իրականացրած Հարավային Կովկաս-Կասպից ավազան-Կենտրոնական Ասիա ռազմավարական գծի շուրջ ընթացող զարգացումներով, ինչպես նաև իրանական հարցին առնչվող գործընթացներով։

Մյուս կողմից՝ ստեղծված իրողությունը Բաքուն փորձեց օգտագործել իր կողմից վարվող կոմպլեմենտար արտաքին քաղաքականության համատեքստում և մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ անցած կես տարում տարվող բանակցություններում։

Վրաստան

Անցած ժամանակաշրջանում Վրաստանի արտաքին քաղաքականությունում, ընդհանուր առմամբ, շարունակեց պահպանվել 2005թ. միտումների տրամաբանությունը։

Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման ֆոնին՝ Թբիլիսիի հատկապես արտաքին հարաբերությունների վրա նկատելի էր ամերիկյան ազդեցության մեծացումը։

Երկրորդ ուշագրավ հանգամանքը ՎՈՒԱՄ-ի գծով Թբիլիսիի ակտիվացումն էր, որը կարող է նոր հարթություն տեղափոխել Վրաստանի արտաքին քաղաքականությունը՝ այդ երկիրը կապելով ընդհանուր արևելաեվրոպական զարգացումների հետ։

Նշված ժամանակահատվածում առանձնացավ Հարավային Օսիայի նկատմամբ Թբիլիսիի վարած տեղեկատվական-հոգեբանական պատերազմի ակտիվացումը, որը գնալով ընդլայնվում է։ Մյուս կողմից՝ ս.թ. հունիսի 14-ին Սուխումում Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կողմից ստորագրված «Հանուն ժողովրդավարության և ժողովուրդների իրավունքի» հռչակագիրը պետք է ընկալել հատկապես Վրաստանի դեմ ուղղված Մոսկվայի պատասխան գործողություն (նշված հռչակագրով սահմանված ռազմաքաղաքական փոխօգնությունը Մոլդովայի պարագայում, թերևս, դժվարկիրառելի է թվում, հետևաբար առաջնային նշանակություն է ձեռք բերում վրացական ուղղությունը)։

Ուշագրավ մեկ հանգամանք ևս. վրաց-ամերիկյան հարաբերությունների օրակարգ է մտել իրանական հարցը։ Հարցի առնչությամբ կողմերի միջև, թերևս, գոյություն չունեն սկզբունքային հակասություններ։ Մյուս կողմից, սակայն, ի տարբերություն Սահակաշվիլու թևի, իրանական զարգացումներին ավելի մեղմ է մոտենում Վրաստանի խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեն։

Ռուսաստան

2006թ. առաջին կեսին Հարավային Կովկասում ՌԴ քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, չի կրել էական փոփոխություններ, սակայն զգալիորեն փոխակերպվել են վարվող քաղաքական գծի համատեքստն ու այլ ուժային կենտրոնների հետ փոխգործակցության (ընդհանուր տարածաշրջանային) պարամետրերը։ Ռուսաստանի գլխավոր գերակայությունները՝ հիմնական տնտեսական/արդյունաբերական, էներգետիկ և այժմ արդեն ծառայությունների ոլորտի հզորությունների ձեռքբերումը և դրանց աստիճանական

սերտաճումը ՌԴ ենթակառուցվածքի հետ, շարունակում են մնալ երկարաժամկետ ռազմավարության նպատակ:

2006թ. առաջին կեսը նշանակալիորեն ակտիվացրեց ռուսական ներկայությունը հարավկովկասյան տնտեսական կյանքում: Այս ակտիվացման հիմնական փուլերն էին վրացական գինու և հանքային ջրի բոյկոտը Ռուսաստանում և հայ-ռուսական գազի հիմնախնդրի շուրջ պայմանավորվածությունները: 2006թ. երկրորդ կեսին կարելի է սպասել Ռուսաստանի կողմից Հայաստանի հետ Իրան-Հայաստան գազատարի շուրջ համաձայնագրի ստորագրման փորձերի ակտիվացում:

Մյուս կողմից՝ Հարավային Կովկասում Արևմուտքի հետ իրական մրցապայքարի կանոնների ընդունումը զգալիորեն փոխել է ակտիվ ներգրավման քաղաքական շարժառիթները: Ըստ երևույթին՝ հումանիտար միասնական տարածքի ամրապնդման պաշտոնական առաջնահերթությունները ենթադրում են տնտեսական և ռազմաքաղաքական բնագավառներում արդեն իսկ հաստատված հարաբերությունների ավելի խոր ինստիտուցիոնալացում, ինչը նախապայման կհանդիսանա Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության և Եվրասիական տնտեսական ընկերակցության նշանակության ու ազդեցության աճի համար:

Նույն տրամաբանության ներքո հարկ է դիտարկել նաև Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) ձևաչափում Ռուսաստանի քաղաքականությունը, որն ի վիճակի է Մոսկվայի համար ազդեցության լրացուցիչ կարողություններ ապահովել ոչ միայն տարածաշրջանային (առաջին հերթին՝ Կենտրոնական Ասիա), այլև՝ գլոբալ հարթություններում:

Իրան

2006թ. առաջին կիսամյակում Իրանի շուրջ ընթացող զարգացումներում շարունակում էր առաջնային մնալ այդ երկրի միջուկային ծրագրի առնչությամբ ստեղծված միջազգային իրավիճակը: Ուրանի հարստացման աշխատանքները վերսկսելու Թեհրանի որոշումը հարցը գործնականում տեղափոխեց նոր մակարդակ՝ պատճառ հանդիսանալով հետևյալ հանգամանքների համար.

- ավելի հիմնարար կերպով սկսեցին քննարկվել Իրանի դեմ ամերիկյան ռազմական գործողության իրականացման հարցերը,
- մյուս կողմից՝ ամերիկյան քաղաքական ու գիտական շրջանակներում աստիճանաբար ավելի ընդունելի դարձավ Իրանի հետ բանակցություններ սկսելու գաղափարը,
- Իրանն, իր հերթին, ակտիվացրել է կապերը ՇՀԿ-ի հետ՝ նպատակ ունենալով անդամակցել վերջինիս (սակայն քիչ հավանական է, որ մինչև Իրանի միջուկային հարցի հանգուցալուծումը Թեհրանը դառնա ՇՀԿ լիիրավ անդամ):

Պետք է ենթադրել, որ 2006-ի երկրորդ կիսամյակը կբնորոշվի վերոհիշյալ գործոնների շուրջ ընթացող զարգացումներով (փուլերի և ձևերի քննարկում): Մեծ է հավանականությունը, որ երկրորդ կիսամյակում հարցի կարգավորման դիվանագիտական ուղին կզբաղեցնի ավելի նշանակալի դեր, քան հավանական ռազմական գործողության իրականացման շուրջ տարվող քննարկումները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի ղեկավար՝ Սնակ Սարուխանյան, խմբագիրներ՝ Խոնարհ Քարաուղլանյան, Լիլիթ Մելիքսեթյան, Լուսինե Բաղրամյան, Մաղլեն Եղիկյան, Անահիտ Հարությունյան, Էդուարդ Գասպարյան, կայքի տեխնիկական խմբագիր՝ Աշոտ Կարապետյան, համակարգչային համակարգի պատասխանատու՝ Գրիգոր Սարգսյան:

Անցյալ կիսամյակում ծրագրի շրջանակներում հրատարակվել են.

Մենագրություններ (գրքույկի ձևաչափով) - 2

1. Արմեն Պետրոսյան, Հայոց ազգածագման հարցեր
2. Արման Կիրակոսյան, Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը

«21-րդ ԴԱՐ» հանդես - 3 համար

Հրատարակվել են **«21-րդ ԴԱՐ»** հանդեսի 1(11), 2(12) և **«21-ый ВЕК»** ռուսալեզու հանդեսի 2006-ի 1(3) համարները:

«Տեղեկագիր» «Նորավանք» ԳԿՀ-ի, 2 համար

1. «Ցեղասպանություն և միջազգային իրավական պատասխանատվություն», Տեղեկագիր N1 (17), 2006
2. «Արժանապատիվ մարդու» հայեցակարգը և ազգի ձևավորման գործընթացը, Տեղեկագիր N2 (18), 2006

www.noravank.am ինտերնետային կայքում հրապարակվել է 61 վերլուծական և հրապարակախոսային նյութ

Կայքում տեղադրվել են նաև 2006թ. առաջին կիսամյակում «Նորավանք» ԳԿՀ-ի հրապարակված տպագիր բոլոր նյութերի էլեկտրոնային տարբերակները, Հիմնադրամի գործունեության հետ կապված նորություններ:

«Նորավանք» ԳԿՀ ինտերնետային կայքն այցելուների աշխարհագրությունն ընդգրկում է ավելի քան 30 երկիր: Կիսամյակի ընթացքում նրանց թիվը գերազանցել է 6000-ը և առաջատար են հետևյալ երկրները. Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ, Իսրայել, Գերմանիա, Ուկրաինա, Վրաստան, Ադրբեջան, Ֆրանսիա, Իրան: 2006թ. մայիս-հունիս ամիսներին ակտիվացել են Հարավային եւ Արևելյան Ասիայի երկրներից՝ առաջին հերթին Չինաստանից, Հնդկաստանից, Պակիստանից, Շրի Լանկայից, Մալայզիայից մուտքերը:

Հեղինակներ և գրախոսություն

2006թ. առաջին կիսամյակին աճել է «Նորավանք»-ի հրատարակությունների հետ համագործակցող հեղինակների թիվը: Հրատարակվել կամ ընդունվել են 12 նոր հեղինակների աշխատությունները: Ընդհանուր առմամբ պատվիրվել և ստացվել է 24, սակայն գրախոսությունների արդյունքում ընդունվել է ընդամենը 14 աշխատանք:

Գրադարան

2006թ. առաջին կիսամյակում գնման կամ նվիրատվության միջոցով «Նորավանք» ԳԿՀ գրադարանը համալրվել է 136 անուն գրքերով և ամսագրերով: Այսօր գրադարանային ֆոնդում կա 1694 կտոր գրականություն:

Կապեր

2006թ. առաջին կիսամյակի ընթացքում ամրապնդվել և հաստատվել են «Նորավանք» ԳԿՀ կապերը մի շարք կազմակերպությունների և անհատների, որոնց թվում՝ Մոսկվայի

միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, «Ռուսաստանում քաղաքական հետազոտությունների կենտրոնի» («Նորավանք»-ը մասնակցում է վերջինիս ամենամյա ամառային դպրոցների աշխատանքներին), Ստրատեգիական և միջազգային հետազոտությունների ինստիտուտի (Լոնդոն), Կովկասյան ժողովրդավարության ինստիտուտի հետ ևն: «Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի աշխատանքներին մասնակցում են մի շարք անվանի հայ գիտնականներ՝ ՀՀ ԳԱԱ աշխատակիցներ: Խմբագրական խորհրդի անդամ է ամերիկյան հայտնի գիտնական Գեորգի Դերլուգյանը:

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն Սևակ Սարուխանյանը 2006-ի փետրվարին դարձել է Ստրատեգիական և միջազգային հետազոտությունների ինստիտուտի (Լոնդոն) անդամ:

Նյութերի փոխանակման և արտատպման շուրջ պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետևյալ հանդեսների և գործակալությունների հետ. «Россия в Глобальной Политике» և «Русский Журнал» հանդեսներ, «Взгляд», «Регнум», РИА «Новости» լրատվական գործակալություններ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի ղեկավար՝ Արտակ Բաղդասարյան, խորհրդական՝ Զավեն Բարսեղյան, հաշվապահ՝ Հերմինե Բարսեղյան, գործավար՝ Սյուզաննա Ֆիրունց, պարետ՝ Սիրեկան Ավետիսյան

2006թ. առաջին կիսամյակում կատարվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովման ծրագրի իրականացման հետ կապված հետևյալ աշխատանքները։

2006թ. առաջին կիսամյակում իրականացվել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գ.Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի ջեռուցման համակարգերի մոնտաժումը, 3-րդ հարկում վերջնականապես ավարտվել են վերանորոգման աշխատանքները։

Կատարվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գ.Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի կոնֆերանսների սրահի կահավորման և սարքավորումների մոնտաժման աշխատանքները, որի արդյունքում ստեղծվել են տարբեր բնույթի միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ՝ շուրջ 40 մասնակցի հնարավորությամբ։

Հավելված 1

Հասարակագիտական ծրագրի շրջանակներում հրատարակված նյութերը, սեմինար-գիտաժողովներին և հեռուստահաղորդումներին մասնակցությունը

Հիմնարար աշխատություններ (գրքույկի ձևաչափով)

1. Արման Կիրակոսյան, «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը»
2. Արմեն Պետրոսյան, «Հայոց ազգածագման հարցեր»

«21-րդ դար» հանդես

3. Տիգրան Սարգսյան, «Ֆինանսական համակարգը և ֆինանսական բարեփոխումները ԱՊՀ երկրներում», թիվ 1 (11), 2006թ.
4. Լևոն Աբրահամյան, «Հայաստանը և հայկական սփյուռքը. տարանջատում և հանդիպում», թիվ 1 (11), 2006թ.
5. Միխայիլ Աղաջանյան, «Հայրենադարձություն. իրավական ապահովման և արդյունավետ իրականացման հարցեր», թիվ 1 (11), 2006թ.
6. Շավարշ Քոչարյան, «Հայաստան. ժողովրդագրական մարտահրավերներ», թիվ 1 (11), 2006թ.
7. Գագիկ Հարությունյան, «Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում», թիվ 2 (12), 2006թ.
8. Տիգրան Սարգսյան, «Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ», թիվ 2 (12), 2006թ.
9. Լևոն Աբրահամյան, «Հայաստանը և հայերը Արևելքի և Արևմուտքի միջև», թիվ 2 (12), 2006թ.
10. Արսեն Հակոբյան, «Հյուսիսային Կովկասում հայության ներկայիս դրության շուրջ», թիվ 2 (12), 2006թ.
11. Արտակ Զաքարյան, «Անկայունության և հատվածայնության գործոնները նոր ժողովրդավարությունների կուսակցական համակարգերի ձևաչափերում», թիվ 2 (12), 2006թ.

12. Սերգեյ Սումլյոննի, Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության էթնիկական ռումբ, թիվ 2 (12), 2006թ.

«21 Դեկ» ռուսալեզու հանդես

1. Гагик Арутюнян, Цивилизационный фактор в контексте проблем информационной безопасности, #1, 2006
2. Левон Абрамян, Армения и армяне между востоком и западом, #1, 2006
3. Сергей Сумленный, Турецкое население Германии: этническая бомба замедленного действия, #1, 2006
4. Тигран Саркисян, Финансовые системы и финансовые реформы в странах СНГ , #1, 2006
5. Михаил Агаджанян, Репатриация соотечественников: вопросы правового обеспечения и эффективной реализации. #1, 2006

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր

6. Վլադիմիր Մարգարյան, «Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները , ձևերը և տեսակները», թիվ 1 (17), 2006թ.
7. Михаил Агаджанян, «Правовые средства защиты лиц, подвергнувшихся этнической чистке на территориях Азербайджанской ССР и Азербайджанской Республики в 1988-91-х годах», թիվ 1 (17), 2006թ.
8. Հասմիկ Հմայակյան, Ռոբերտ Ղազարյան, «Հայ մարդու բարոյական կերպարը հայ միջնադարյան գրականության մեջ ու էպոսում», թիվ 2 (18), 2006թ.
9. Արմեն Այվազյան. «Հայ զինվորականության պատվո վարքականոնը», (4-5-րդ դարեր), թիվ 2 (18), 2006թ.
10. Հասմիկ Հմայակյան, «Թուխ Մանուկների» պաշտամունքը և միջնադարյան Հայաստանի արհեստակցական միությունները, թիվ 2 (18), 2006թ.
11. Խաչատուր Դադայան, «Հայ վաճառականի վարքականոնային ուրվապատկերը»
12. Նելսոն Շահնազարյան. «Արժանապատիվ մարդու հայեցակարգերն արևմտյան և հեռավորարևելյան քաղաքակրթություններում», թիվ 2 (18), 2006թ.
13. Արաքս Փաշայան. «Բարեպաշտ մահմեդականի վարքականոնի առանձնահատկությունները», թիվ 2 (18), 2006թ.
14. Լիլիթ Մելիքսեթյան, «Արժանապատիվ մարդու՝ միջնադարյան ասպետության հայեցակարգը և Արթուր արքայի մասին առասպելները», թիվ 2 (18), 2006թ.

«Հանրապետական» ամսագիր

1. Գագիկ Տեր-Հարությունյան, «Ուղեղային» կենտրոնների մասին», թիվ 3 (34), 2006թ.
2. Թամարա Վարդանյան, «Ազգայնականության դասակարգման շուրջ», թիվ 3 (34), 2006թ.
3. Գագիկ Տեր-Հարությունյան, «Քաղաքակրթական կողմնորոշումների շուրջ», թիվ 5(36), 2006թ.

Այլ պարբերականներում

1. Тамара Варданян, Коллективная память и репрезентация истории в контексте трансформирующихся потребностей социума. - http://www.eu.spb.ru/reset/workpapers.htm
2. Թամարա Վարդանյան, «Հայ Առաքելական եկեղեցին որպես հայ ինքնության կրոնահոգեբանական ամրոց», «Ուխտ Արարատի», թիվ 9, 2006:
3. Թամարա Վարդանյան, «Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը. 1905թ. փետրվար 6-9-ը, «Ուխտ Արարատի», թիվ 8, 2006:

1.6 Գիտաժողովներ և սեմինարներ

1. «Эволюция идеологических установок в переходном этапеѣ, զեկուցում «Կովկասն առանց հակամարտությունների և ահաբեկչության: Քաղաքակրթությունների երկխոսություն Կովկասյան խաչմերուկում» միջազգային գիտաժողովում, զեկուցող՝ Գագիկ Հարությունյան, մայիսի 17-18, Երևան
2. «Հայաստանցիների վստահությունն իշխանությունների նկատմամբ. սոցիարցման արդյունքների վերլուծություն», հունվարի 26, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ
3. «Nation Branding. նախագիծ Հայաստանի համար», զեկուցող՝ Գրիգոր Բաղալյան, փետրվարի 2, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ
4. «Հայրենադարձության իրավական խնդիրները», զեկուցող՝ Միքայել Աղաջանյան, փետրվարի 9, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ
5. «Հայաստանի բնական ռեսուրսների շահագործման հեռանկարները», զեկուցող՝ Վան Գրիգորյան, փետրվարի 17, 2006թ. «Նորավանք» ԳԿՀ
6. «Հայության քաղաքակրթական կողմնորոշումները», զեկուցող՝ Գագիկ Հարությունյան, մայիսի 4, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ
7. «Թիֆլիսահայության հիմնախնդիրները», զեկուցող՝ Թամարա Վարդանյան, հունիսի 23, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ
8. Հարավկովկասյան մայրաքաղաքների էթնոմշակութային և սոցիալ-քաղաքական դինամիկայի գործոններն ու մոդելները», զեկուցող՝ Սամվել Մանուկյան, հունիսի 30, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ:

1.7 Նպատակային հետազոտահաղորդումներ

1. «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով հաղորդաշարի 1-ին հաղորդում ՝ 19.03.2006թ. (ուղեղային կենտրոնների դերի շուրջ)
2. «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով հաղորդաշարի 2-րդ հաղորդում ՝ 30.04.2006թ. (քաղաքակրթական հիմնախնդիրների շուրջ)
3. Մամլո ասուլիս, Հայրենադարձության օրինագծի շուրջ

Հավելված 2

Քաղաքական հետազոտությունների ծրագրի շրջանակներում հրատարակված նյութերը, սեմինար-գիտաժողովներին և հեռուստահաղորդումներին մասնակցությունը

«21-րդ դար» հանդեսում

1. Սարգիս Հարությունյան, «Տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումները և Լեռնային Ղարաբաղի խնդիրը» ,#1 (11), 2006թ.
2. Գագիկ Հարությունյան, «Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում», # 2 (12), 2006թ.
3. Ռուբեն Սաֆրաստյան, Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը. «մեծ խաղի» դրվագներ», #2 (12), 2006թ.
4. Սերգեյ Մինասյան, «Կոմբատանտների, վարձկանների, փախստականների և ՍՏԱ կարգավիճակ ունեցողների դերակատարումը Ղարաբաղյան հակամարտությունում», #1 (11), 2006թ.
5. Սամվել Մարտիրոսյան, «Ղարաբաղյան հակամարտություն. խաղաղապահ գործողությունների հնարավոր սցենարները», # 1 (11), 2006թ.
6. Արտակ Շաքարյան, «Թուրք-ամերիկյան հարաբերություններ (2003-2006թթ.)», # 2 (12), 2006թ.
7. Արսեն Հարությունյան, «ՀՀ ԶՈՒ զարգացման հեռանկարները և ՌԴ-ի հետ ռազմական համագործակցության իրավական ապահովումը», # 2 (12), 2006թ.

«21 Век» #1 հանդեսում

1. Саргис Арутюнян, Региональные военно-политические развития и проблема Нагорного Карабаха
2. Самвел Мартиросян, Возможные сценарии миротворческой операции в зоне Карабахского конфликта
3. Сергей Минасян, Соотношение статусов комбатантов, наемников, беженцев и ВПЛ в Карабахском конфликте
4. Давид Гаспарян, Приднестровский конфликт, современный этап развития
5. Ваагн Аглян. Российская Федерация и Южный Кавказ. Структурная взаимосвязанность и перспективы развития отношений.

«Հանրապետական» ամսագրում

1. Սարգիս Հարությունյան, «Ադրբեջանը Պենտագոնի ռազմավարական վերափոխումներում», # 1 (32), 2006թ.
2. Սնակ Սարուխանյան ,«Իրան. նոր զարգացումներ միջուկային ծրագրի շուրջ», # 1(32), 2006թ.
3. Գագիկ Տեր-Հարությունյան , «Ռուսական գազ. տնտեսություն և քաղաքականություն,», # 1, (32), 2006թ.
4. Գագիկ Տերտերյան, «Հյուսիսային Կովկասում պայթեցումների շուրջ», # 2 (33), 2006թ.
5. Սարգիս Հարությունյան, «Կասպյան խաչմերուկ», # 2 (33), 2006թ.
6. Վահագն Ազլյան, «Ֆրանսիա. միջուկային նոր գերակայություններ», # 2 (33), 2006թ.
7. Կարեն Վերանյան, «Աբխազիայի հայությունը նոր մարտահրավերների առջև», # 3 (34), 2006թ.
8. Գագիկ Տեր-Հարությունյան, ««Ուղեղային» կենտրոնների մասին», # 3 (34), 2006թ.
9. Գագիկ Տեր-Հարությունյան, «Զարգացումներ Իրանի շուրջ», # 4 (35), 2006թ.
10. Սարգիս Հարությունյան, «Թուրքիան մարտահրավերների առջև», # 4 (35), 2006թ.

11. Գագիկ Տերտերյան, «Ռուսաստան. խնդիրներ Արևմուտքում և հեռանկարներ Արևելքում», # 4 (35), 2006թ.
12. Սևակ Սարուխանյան, «Իրան-ԱՄՆ. զարգացման հեռանկարներ», # 5 (36), 2006թ.
13. Սարգիս Հարությունյան, «Թուրք-ամերիկյան հարաբերությունների շուրջ», # 5 (36), 2006թ.
14. Գագիկ Տերտերյան, «Միացյալ Նահանգներ. նոր հիմնախնդիրներ», # 5 (36), 2006թ.
15. Վահագն Ագլյան, «Նոր գերակայություններ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում», # 5 (36), 2006թ.
16. Սարգիս Հարությունյան - «Ղարաբաղյան հիմնախնդիր. իրավիճակային վերլուծություն», # 6 (37), 2006թ.
17. Գագիկ Տեր-Հարությունյան, «Աշխարհաքաղաքական վերադասավորումներ. կողմնորոշումների հստակեցում», # 6 (37), 2006թ.

«Երկիր» շաբաթաթերթում

1. Գագիկ Հարությունյան, «Ռուսական գազի շուրջ ստեղծված իրադրությունը», հունվարի 19, 2006թ.
2. Կարեն Վերանյան, «Դիտարկում Արցախի հիմնախնդրի շուրջ», մարտի 10, 2006թ.
3. Կարեն Վերանյան, «Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության ազդեցությունը Հարավային Կովկասում», մարտի 17, 2006թ.
4. Կարեն Վերանյան, «Մերձավոր Արևելք. նոր միտումներ», մարտի 24, 2006թ.
5. Կարեն Վերանյան, «Հետախուզական սկանդալ Վրաստանում», մայիսի 5, 2006թ.
6. Կարեն Վերանյան, «Ռուս-վրացական հարաբերությունների շուրջ. հնարավոր հետևանքներ», մայիսի 19, 2006թ.
7. Կարեն Վերանյան, «Իրանական դոսյե. Իսրայելի գործոնը», մայիսի 26, 2006թ.
8. Կարեն Վերանյան, «Նոր միտումներ Հարավային Կովկասում», հունիսի 9, 2006թ.
9. Կարեն Վերանյան, «Իրանական հանգույց. Վրաստանի մոտեցումը», հունիսի 16, 2006թ.

«Regnum.Ru» կայքէջում

1. Севак Саруханян, «Война в Ираке, страхи Кадаффи, "покаяние" Хана и будущее российско-иранских отношений», 16.06. 2006
2. Гагик Тер-Арутюнян, «От взрывов газопровода более всего выигрывают США и их союзники», 2. 02. 2006
3. Гагик Тер-Арутюнян, «Кризис бренда "Америка": Вызов "исламского предводителя" Ахмадинежада "воинствующему евангелисту" Бушу», 18.02.2006.

«Նորավանք» ԳԿՀ կայքում

1. «2006թ. ՌԴ նախագահի ուղերձը Դաշնային ժողովին. ռուսաստանյան ռազմավարական նոր գերակայությունների որոշ ուրվագծեր», մայիսի 22, 2006թ., Վահագն Ագլյան
2. «Ռուս-վրացական հարաբերությունների շուրջ. հնարավոր հետևանքներ», հունիսի 2, 2006թ., Կարեն Վերանյան
3. «Սահակաշվիլու այցը Սանկտ Պետերբուրգ. վրացական դիվանագիտության անհաջողությունը», հունիսի 14, 2006թ., Սարգիս Հարությունյան
4. «Ղարաբաղյան հիմնախնդիրը. զարգացման հավանական սցենար», հունիսի 15, 2006թ., Կարեն Վերանյան
5. «Ամերիկա-իրանական հավանական պայմանավորվածության նշանները», հունիսի 16, 2006թ., Սարգիս Հարությունյան
6. «Իրան-ԱՄՆ. զարգացման հեռանկարներ և սցենարներ», հունիսի 17, 2006թ. Սևակ Սարուխանյան:

Գիտաժողովներ, սեմինարներ

1. «Ռուսական գազի շուրջ ստեղծված իրադրությունը», հունվարի 19, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ, զեկուցող՝ Գագիկ Հարությունյան
2. «Իրանական գազը Արևելքի ու Արևմուտքի միջև. հեռանկարներ Հայաստանի համար», մարտի 28, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ, զեկուցող՝ Սևակ Սարուխանյան
3. «Iranian gas and the security of the South Caucasus», «Energy and Security» գիտաժողով, մարտ, 2006թ., Թեհրան, զեկուցող՝ Սևակ Սարուխանյան
4. «Իրանի արտաքին քաղաքականությունը», ապրիլի 3, 2006թ., «Նորավանք» ԳԿՀ, զեկուցող՝ ՀՀ-ում Իրանի փոխդեսպան Ալի Աքբար Ջոուքար
5. «Փոխզիջման որոնում ԼՂՀ հակամարտության կարգավորման ուղղությամբ», հունիսի 21-23, Ինտերնետ-ֆորում, Սևակ Սարուխանյան:

Նպատակային հեռուստահաղորդումներ

1. «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով հաղորդաշարի 3-րդ հաղորդում՝ 06.06.2006թ. (Հայաստանը գլոբալ քաղաքական հարթությունում):

Հարցազրույցներ և այլ հրապարակումներ

Անցած կես տարում ծրագրի աշխատակիցները մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել «Հ2», «Արմենիա Թի-Վի», «Երկիր մեդիա», «Կենտրոն», «Russia Today» հեռուստաընկերություններին, «Ազգ» և «Новое время» (Բաքու), Голос Армении» թերթերին, «Armenianow.Com» կայքէջին: